ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԺԱՄԱՆԱԿԱԲԱՆԱԿԱՆ ՍԿԶԲՆԱԳԻՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՆՈՐ ՓՈՐՁ*

ԹԱԴ. ԱՎԳԱԼԲԵԳՅԱՆ

ԱՌԱՋԱԲԱՆ

1. Հայաստանի տնտեսության պատմության գլխավոր ներքին աղբյուրները։
2. Սրանց վավերականության ու ժամանակի հարցը։
3. Խորենացու «Պատմությունն» իբրև կարևորագույն աղբյուր։
4. Սրա վավերականության ու ժամանակի հարցը։
5. Գուտշմիտի խոսքը՝ «ամեն փորձ պետք է սկսել ժամանակագրությունից»։
6. Ռ գրքի ժամանակագրության արդի կերպարանքն ու Խորենացու ժամանակի հարցը։ Օրինակներ. Սահակ-Մեսրոպի մահվան ու Վարդանանց պատերազմի թվականներն ըստ Ս. Աննցու ու Այրիվանեցու։
7. Գ գրքից անցում Բ գրքին։

Ա.

8. Խորենացու պատմության Ա գիրքը ժամանակագրական ընդհանուր նշանաձողեր ունի, բայց անընդհատ ու «կանոնյալ» ժամանակագրություն չունի։
9. «Կանոնյալ» ժամանակագրությունն սկսվում է Բ գրքից։
10. Այս գրքի ժամանակագրությունը չի կարելի անկախ քննել առանց կապակցելու Ռ գրքի ժամանակագրության սկզբնավորության հետ (Տրդատ)։
11. Մենք հետազոտել ենք Ռ ու Ռ գրքերը միասին։
12. Այստեղ զբաղվում է միայն Ռ գրքինը։

Բ.

1. Խորենացին ամենատարածված հայ պատմագիրն է եղել։
2. Ռիտական հրատարակությունը կատարվել է մոտ 30 ձեռագրի հիման վրա (հնագույնը XIII—XIV դարու)։
3. Մեզ հասել է և հաշվառված է ենթարկվել 50-ից ավելի ձեռագիր**։
4. Խորենացու ուսումնասիրության ժամանակ նկատի է առնվում նաև այն ձեռագրերը, որոնք մեր ձեռքը չեն հասել։

---

* Այստեղ հրապարակում ենք Թադ. Ավգալբեգյանի՝ 1929 թ. մարտի 16-ին Հայաստանի գիտության և արվեստի ինստիտուտի պատմա-հասարակագիտական բաժնում Խորենացու ժամանակագրության մասին կարդացած զեկուցման թեզիսները։ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրության քննությունը հատուկ կարևորություն ունի Պատմահոր երկի արժանահավատության հավաստման և արժեքավորման համար։ Այստեղից էլ այն առանձնակի հետաքրքրությունը, որ հայագիտության մեջ ցուցաբերվում է Խորենացու ժամանակագրության նկատմամբ։ Թադ. Ավգալբեգյանը իր զեկուցման մեջ քննարկել է Խորենացու «Պատմության» Ռ գրքի ժամանակագրությունը։ Այս զեկուցման պահպանված թեզիսներն իսկ պարզություն են մտցնում շոշափվող հարցերում և լուրջ կռվաններ ու բանալի տալիս լուծելու Խորենացու ժամանակագրության կնճռոտ մի շարք խնդիրներ։ Հեղինակը ցույց է տալիս, որ անտիխրոնիզմները մեծ մասամբ առաջացել են հետագայում՝ «Հայոց պատմության» արտագրությունների ժամանակ, իսկ Խորենացու երկի սկզբնապրի մեջ ժամանակագրությունը, մասնավորապես՝ հայապարսիկ սինխրոնիստական ճշգրիտ է։

** Ա խումբ՝ 6 ձեռագիր + Լայպցիգ, Վանանդեցի, Կարինյան = 9
Տ խումբ՝ 6 ձեռագիր + Ա[1] = 7
Ա խումբ՝ 8 ձեռագիր + Աղթամար + Լազարյան + Վենետիկ 6 = 14
30
30 ձեռագիր պահազան տեղեր + 22
52 ձեռագիր

5. Սրանք Խորենացու այն օրինակներն են, որ գործ են ածել մեր մատենագիրները.

6. Սեբեոս, Դրասխանակերտցի, Ասողիկ, Արծրունի, Կողանկատվացի, Ուխտանես, Մխիթար Անեցի, Սամվել Անեցի, Վարդան, Կիրակոս, Այրիվանեցի, Օրբելյան, Վահրամ, Սիմեոն Ապարանցի, Մովսես Բաղրամյան, Խուշտուռ Ջուղայեցի և այլն—16։

Ընդամենը մոտ 40 ձեռագիր։

7. Սրանցից ուսումնասիրված է միայն Դրասխանակերտցունը (Արեղյան), Մյուսները, օրինակ, Ասողիկը, մնում են։

1գ.

1. Բազմաթիվ արտագրությունների ու արտագրած ձեռագրերի հետ կապված պատահականությունները խիստ դժվարացնում են Խորենացու ուսումնասիրությունը։

2. Չի կարելի հիմնվել այս կամ այն ձեռագրի կամ մատենագրի եզակի հատվածի վրա. պետք է որոնել ավելի կայուն պատվանդան։

3. Այս պատվանդանը հեղինակի գրվածքի ընդհանուր համերաշխությունն է, մասնավորապես նրա ժամանակարանական ամբողջ սիստեմը։

4. Ժամանակարանական տարբեր տվյալներից ընդունելի է այն, որ համերաշխում է ընդհանուր սիստեմին։

5. Վերջապես պետք է չվել այն հիմնական համոզումից, որ Խորենացին, տաղանդավոր ու բարձրորակ մի մատենագիր, կարող էր ճիշտ գումարել ու հանել թագավորական գահատարիքներին վերաբերող թվական տվյալները։

6. Պատկանյանի իրավացի խոսքը, թե՝ Խորենացուն պետք է հենց իրենով ստուգել։

II. Բ ԳՐՔԻ ԺԱՄԱՆԱԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՅՍ ՈՒՂՂԵԼՈՒ ԵՐԵՔ ՓՈՐՁ

1. Բ գրքի սկզբնակետը Սելևկյան հարստության հիմնադրման թվականն է՝ 252—250։

2. Սրա վերջնակետը Տրդատի թագավորությունն է։

3. Մինչդեռ Ռ գիրքը 4 քանոն ունի 3+1 (1-ը կաթուղիկոս), այս Բ գիրքը ժամանակարանական երեք շարք կամ քանոն ունի՝ պարսից, հայոց ու հռովմայեցոց։

4. Բ գրքի սինխրոնիստիկայի պատվանդանը պարսից Արշակունիների ժամանակարանությունն է։

5. Հայ Արշակունիների ժամանակարանությունը միշտ զուգորդված է պարսից թվականների հետ (կարդալ բոլոր օրինակները)։

6. Արշակ Քաջ՝ 252 թ.։

Արտավանի մահը 246 թ. (Տրդատի գահակալությունից 1+26+14 տարի առաջ)։

7. Արշակ Քաջից մինչև Արտավան՝ 498—96 տարի։

8. Ըստ Խորենացու այժմյան բնագրի՝ պարսիկ Արշակունիների տևողությունն է 455 տարի։

III. ԵՐԵՔ ՓՈՐՁ

1. Ըստ այսմ պակասում է 40 տարուց ավելի։

2. Քննադատները սակայն նկատի չունեն այս բացը. նրանց հաշիվների հիմքը ոչ թե Արտավանի սպանության այն թվականն է, որ ընդունել է Խորենացին, այլ գիտականորեն ստուգվածը, որ է 226։ (Բոլորն սկզբնակետ ընդունում են 250 թ. Ք. ա.)։

3. Ըստ այսմ բաց թողած տարիներ հանդարում են 250+226=476—455՝ 21 կամ 20 տարի։

4. Վիստոն եղբայրների ուղղումը 1736 թվականին. Արշակ Մեծ 77 տարի (փոխանակ 53-ի)։

5. Սեն-Մարտենի ուղղումը 1840 թվականին. Արշական՝ 50 տարի (փոխանակ 30-ի)։

6. Ք. Պատկանյանի ուղղումը 1884 թվականին. Արտաշես՝ 46 (փոխանակ 26-ի)։

7. Այս ուղղումների թերությունները։

8. Խորենացու արդի բնագրի համաձայն պարսիկ ու հայ Արշակունիների մոտավոր սինխրոնիզմ կա, իսկ սրանց ու հռովմայեցոց թվականներն անսինխրոնիստական են։

9. Վիստոնների ու Պատկանյանի ուղղումները պահպանում են պարսիկ-հայ սինխրոնիստիկան։

10. Սեն-Մարտենի ուղղումը խախտում է այս էլ։

IV. ԺԱՄԱՆԱԿԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԵՔ ՍԱՀՄԱՆԱԿԵՏ

1. Բոլոր հիշյալ փորձերի սխալն այն է, որ նրանք ժամանակարանական հաշիվների մեջ ընդունել են մեկ սահմանակետ—Բ գրքի ժամանակագրության սկզբնակետը՝ 250 թ.։

2. Պետք է որոնել ուրիշ հաստատուն անկասկածելի կետեր էլ. այսպիսիներից է Տրդատի գահակալության թվականն ըստ Խորենացու (287—290)։

3. Սակայն ամենից հաստատուն ու անվիճելի սահմանակետը Քրիստոսի ծննդյան թվականն է, որ ընկնում է Արգարի թագավորության 2-րդ կամ 3-րդ տարին։

4. Ժամանակարանական ստուգումների նոր եղանակ՝ բաղդել Խորենացու Բ գրքի ժամանակագրությունը նախ երկու խոշոր կտորների վերածելով՝

ա) Քրիստոսից հետո,

բ) Քրիստոսից առաջ։

5. Այս առաջարկը հեշտացնում է գործը և կատարվող սխալների հետևանքները չի տարածում ամբողջ շղթայի վրա։

V. ՊԱՐՍԻԿ ԱՐՇԱԿՈՒՆԻՔ ՔՐԻՍՏՈՍԻՑ ՀԵՏՈ

1. Արդարը թագավորում է Ք. ա. 2 կամ 1 թվին։

2. Արդարը թագավորում է պարսից Արշավիր 20-րդ տարում. սա գահակալել է ուրեմն Ք. ա. 21 կամ 20 թ.։

3. Ընդունենք պարսից Արշավիր Ք. ա. 21 ու հայոց Արգար Ք. ա. 2 և կազմենք պարսիկ ու հայ Արշակունիների սինխրոնիստիկան։

4. Փոքրիկ ուղղումներ պարսից գծում.

ա) Արշակ՝ 17 տարի, փոխանակ 19-ի,

բ) Արտավան՝ 36 տարի, փոխանակ 31-ի։

5. Արտավանի 36 տարվա պատճառաբանությունը (31-ի դեպքում Խոսրով շարունակում է թագավորել 19 տարի էլ, այնինչ նա 10 տարի կռվում է Արտաշիրի դեմ, գալիս է Անակը և 3-րդ տարում սպանում Խոսրովին=14 տարի. Խոսրով 48—14=34. 34+Արտավանի երկու տարին Խոսրովից առաջ=36 տարի)։

6. Հայոց գծում.

ա) Սրվանդ 21 տարի, փոխանակ 20-ի

բ) Վաղարշակ 21 տարի, փոխանակ 20-ի։

7. Սրվանդի մասին ամենուրեք 20, Վաղարշակի՝ 21 ունեն Մ. Անեցի, Այրիվանեցի, Ս. Անեցի(?)*

Հայ պարսիկ սինխրոնիզմը կատարյալ է։

VI. ՀԱՅ ԱՐՇԱԿՈՒՆԻՔ ՔՐԻՍՏՈՍԻՑ ՀԵՏՈ

(տե՛ս V 6, 7)։

8. Պարսիկ ու հայ Արշակունիների սինխրոնիստիկան մոտավորապես այս կերպարանքով ունի մեկ հայ մատենագիր՝ Սամվել Աննցին. (հմմտ. նաև Ջուղայեցի)։ Նրա ժամանակագրության (խրոնիկայի) անտեսումը բանասերներին ու պատմաբաններին դարավոր և ունայն տրքնություն է պատճառել։

VII. ՊԱՐՍԻԿ ԱՐՇԱԿՈՒՆԻՔ ՔՐԻՍՏՈՍԻՑ ԱՌԱՋ

1. Պատմական ժամանակամիջոցը 252 կամ 250 տարի է։

2. Խորենացու տված գահատարիքի գումարը 110—112 է, պակասում է 40 տարի։

3. Սենեքերիմի ուղղումը. Արշական՝ 50. սրա հիմքը՝ Տիգրան 49-րդ տարում։

4. Պատկանյանի առարկությունները.

ա) լավագույն ձեռագրերն ունեն 19,

բ) 49 ստացվել է Արշական 30+Արշանակ 19։

---

* Ս. Անեցի, էջ 59, տե՛ս այլընթերցումը։

5. Լավագույն ձեռագրերից Ա խմբից շատերը (Լամբրոնացու ձեռագրի ճյուղ) ունեն 49 (կ²dfewı), 2-ը՝ 29 (a, b) հմմտ. ԻԹ և ԻԹ (Վարդան՝ 27, հավանորեն Ի և Թ կարդացվել է ԻԵԻԹ — 27)։

6. Պատկանյանի մյուս առարկությունը՝ հայ-պարսիկ թանոնների անախրոնիզմ, լուրջ առարկություն է, բայց ինչպես հետո կտեսնենք, վերանում է։

7. Պատկանյանի ուղղումը՝ Արտաշես 46. հիմք՝ Սամվել Անեցի, Այրիվանեցի։

8. Մեր լրացումը. Մխիթար Անեցի (1 տնգամ) ու Խաչատուր Ջուղայեցի։

9. Սեն-Մարտենի ու Պատկանյանի ուղղումները առանձին-առանձին երկարացնում են 20 տարի։

10. Նրանց ասածի սինթեզը երկարացնում է 40 տարի։

11. Արտաշեսին՝ 26-ի փոխարեն 46 ու Արշակին՝ 30-ի փոխարեն 50 տալը վերացնում է պատմական ժամանակամիջոցի 40 տարվա թերին։

12. Այսպիսով, ամբողջանում է պարսիկ Արշակունիների խրոնոլոգիայի ամբողջ շղթան Ք. ա. 250 թ. մինչև Ք. հ. 246 թ.։

13. Պարսիկ հարստության տևողությունն ըստ Խորենացու վերականգնած սկզբնագրի 496—498 տարի է։

14. Միակ հայ մատենագիրը, որ մոտենում է այս վերականգնած խրոնոլոգիային՝ Խաչատուր Ջուղայեցին է։

15. Նա Արշակ Քաջին գնում է Ք. ա. 250-ին, իսկ Արտավանի մահը՝ Ք. հ. 241-ին, գումար՝ 291 տարի։

16. Նրա տվյալները՝

ա) Արտաշես 46,

բ) Արշակ՝ 70 տարի (Արշակ 57 + Վաղ. 13)։

17. Ջուղայեցու ուղղումը նման Վիստոնների ուղղմանը. երկուսն էլ մերժում ենք, որովհետև խախտում են հայ-պարսիկ սինխրոնիստիկան Քրիստոսից առաջ։

18. Պատկանյանի աղյուսակի քննադատությունը.

ա) կարծեցյալ սինխրոնիզմներ,

բ) տարիների պակաս,

գ) Արդարի ու Արշամի թվականները ոչ ըստ Խորենացու,

դ) Խորենացուն վերագրված միամտությունն ու ծուլությունը։

VII. ՀԱՅ ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԸ ՔՐԻՍՏՈՍԻՑ ԱՌԱՋ

1. Հայ Արշակունի հարստության հիմնադրության թվականը պարսիկ Արշակունիների ժամանակարանության ուղղումից հետո (հասկանալի է, ըստ Խորենացու)։

2. Արշական 123 թվ. + 12 տարի = 135 թվական։

3. Ուրեմն Ք. ա. պատմական ժամանակամիջոցն է 135 տարի։

4. Խորենացին ունի 115 տարի (հմմտ Ս. Անեցի)։

5. Պակասում է 20 տարի։ Հավատանք ու թողնենք։ Դիմենք սինխրոնիստիկային։

6. Ժամանակարանական հաշիվ ներքևից՝ Արգարից ու Արշամից. վերջինս 22 թվին։

7. Վերևից՝ Վաղարշակ, Արշակ, Արտաշես, Տիգրան. սա մեռնում է 43 թվականին.

8. Արանք՝ ուղիղ 20 տարի։

9. Ո՞վ է սրանց միջև՝ Արտավազդ։

10. Քանի՞ տարի է սա իշխել։ Լռություն։

11. Այս խորհրդավոր լռությունը կասկածելի է։

12. Խորենացին չի տալիս Արտավազդի տարիները։

13. Չկա Բ ու Դ դրքում մեկը, որի գահատարիքը Խորենացին չտա։

14. Թվել Վաղարշակից մինչև Արտաշես վերջին։

15. Նույն իսկ Արտավազդ Բ-ի համար նա այնքան ճշտապահ է, որ հիշատակում է նրա մահը «յետ սակաւ ինչ աւուրց թագաւորելոյն իւրոյ», (էջ 191)։

16. Անկասկած է, որ Խորենացին Արտավազդի համար էլ պիտի դրած լիներ մի թվական։

17. Ի՞նչ կարող էր լինել այն։

18. Հեսապա պատմիչները (Անեցիներ, ու Այրիվանեցի) գրում են Բ տարի։

19. Այս չի լցնում թերին։

20. Մեր ուղղումը—փոխանակ Բ-ի կարդալ Ի։

21. Ի տառի գլխի ուղղումը շտկում է հայ Արշակունիների ամբողջ խրոնոլոգիան։

22. Արտավազդ 41—42-ին։

23. Просвещение հանրագիտակն Անտոնիուսի Միջագետք գալու մասին։ Միակ անախրոնիզմ՝ Տիգրան Արշեզի ժամանակ՝ 1—2 տարվա տարբերություն։ Այս ուղղվում է Վարդան պատմիչով, որ Տիգրանին տալիս է 34 տարի փոխանակ 33-ի։

VIII. ԵՌԱՔԱՆՈՆ ՍԻՆԽՐՈՆԻՍՏԻԿԱ

1. Հետևանքներ.

ա) պարսից Արշակունիների 498 տարվա ժամանակամիջոցը լրացված է,

բ) հայ Արշակունիների 395 տարվա ժամանակամիջոցը լրացված է (Վաղարշակից մինչև Խոսրովի մահը),

գ) պահպանված են Խորենացու տասնևմեկ սինխրոնիստական ցուցումները անփոփոխ։

գ) վերականգնված է պարսիկ-հայ երկքանոն սինխրոնիստիկան ամբողջապես։

2. Հապա երրորդ քանո՞նը. հռովմայեցի՞ք։

3. Քննադատներն այս մասին. Գարագաշյան, Խալաթյան և այլն և այլն։ Տասնյակ տարիների տարբերություն։

4. Մալխասյանի կարծիքը (Ասողիկ, ծանոթ. 39)։

5. Գուտշմիտի կարծիքը, թե Խորենացին միանգամայն անծանոթ է հռովմայեցոց պատմությանը։

6. Հիմա կարդանք ու տեսնենք։

7. Пассаж,—կասեր Գոգոլը։

IX. ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՎԱՆԴԱՆԻ ՓԼՈՒԶՈՒՄԸ

1. Գուտշմիտի խոսքը, թե Խորենացու երկի արժեքի յուրաքանչյուր քննություն պետք է բխե նրա ժամանակաբանության քննությունից։

2. Քննադատներից շատ շատերը նիզակ են ճոճել այս ասպարեզում տարբեր անհաջողությամբ. օտարներից գլխավորապես Գուտշմիտ ու Կարիեր, մերոնցից՝ Պատկանյան, Գարագաշյան, Խալաթյան և այլն։

3. Որքան առաջ տիրապետող է եղել անքննադատ հիացքն, այնքան XIX դարում գերակշռել է աչառու պարսավը։

4. Խորենացու վերաբերմամբ բոլորովին այլ չափանիշ, խիստ չափանիշ է գործածված եղել, քան մյուս հայ մատենագիրների վերաբերմամբ։

5. Օրինակ, Փավստոս գիտե Կոստանդիանոսին ու Վաղեսին և Ներսիկին ու Շապուհին միայն։

6. Փարպեցին մինչև Հազկերտ Բ ոչ մի թվական չի տալիս։

7. Կորյուն՝ Վռամ-Կրմանին 6 տարի է տալիս։

X. ԳՈՒՏՇՄԻՏ

1. Սրա հին կարծիքը 1861 թ.։

2. Հակառակ կարծիք 1876-ին։

3. Գուտշմիտ չէ զարմանում, որ հռոմական բարձր կրթության տեր մարդ այդքան անտեղյակ է Հռովմի պատմությանը ժամանակաբանական տեսակետից։

4. Գուտշմիտ չէ զարմանում, որ Հռովմի կայսրների թվականը 18 տարով տեղահան է. արված ամենուրեք։

5. Նրա մտքով չէ անցնում այս բացատրել ձեռագրի աղավաղումով. այս դեպքում նա ցած է կանգնած Սեն-Մարտենից ու Պատկանյանից։

6. Ամեն քայլափոխում շեշտելով, թե Խորենացին օգտվում է Եվսեբիոսից, նա չի փորձում Խորենացու ժամանակաբանական տվյալները համեմատել Եվսեբիոսի ժամանակաբանական տվյալների հետ (հմմտ. Փիրմելիանոսի օրինակը, որ իբրև թե եպիսկ. 231-ին և չէր կարող 311-ի անցքերը գրել։ Որոգինես մեռած 254-ին, Փիրմելիանոս՝ 315)։

7. Արիստոն Փեղղացու մասին։

8. «Մովսես ստե՛լ է, Մովսես դարբնե՛լ է, Մովսես դիմակազերծ է եղած»։

1. Արշակ Քաջ	31	252—222
2. Արտաշես	46*	221—176
3. Արշակ Մեծ	52**	175—124
4. Արշական (Վաղարշակի XIII ա.)	50***	123—74
5. Արշանակ	32****	73—42
6. Արշեկ	20	41—22
7. Արշավիր	46	21— Քրիստ. հետո—25
8. Արտաշես	34	26—59
9. Դարեհ	30	60—89
10. Աշակ	17*****	90—106
11. Արտաշես	20	107—126
12. Պերոզ	34	127—160
13. Վաղարշ	50	161—210
14. Արտավան	36******	211—246

1. Վաղարշակ	22 տարի	135—114
2. Արշակ	13 տարի	113—101
3. Արտաշես (Արշականի XIV ա.)	25 տարի	100—76
4. Տիգրան (Արշականի XLIX ա.)	33 տարի	75—43
5. Արտավազդ	[20]* տարի	42—23
6. Արշամ (Արշեղի XX ա.)	20 տարի	22—3
7. Արդաշիր (Արշավիրի XX ա.)	38	2— Քրիստ. հետո—36
8. Սանատրուկ (Արտաշեսի XII ա.)	30	37—66
9. Երվանդ (Դարեհի VIII ա.)	[21]**	67—87
10. Արտաշես (Դարեհի XXIX ա.)	41	88—128
11. Տիրան (Պերոզի III ա.)	21	129—149
12. Տիգրան (Պերոզի XXIV ա.)	42	150—191
13. Վաղարշ (Վաղարշի XXXII ա.)	[21]***	192—212
14. Խոսրով (Արտավանի III ա.)	38	213—261

* Ս. Անեցի. էջ 47, Այրիվանեցի. էջ 21, Մխիթար Անեցի (2 տեղ), Հայ. Հոդածեցի, էջ 36. Ըստ Խորենացու 26 տարի:

** Սեբեոս, էջ 17, Ասողիկ, էջ 31. Ըստ Խոր. 53 տարի:

*** Ըստ Սեն-Մարտենի. Ըստ Խոր. 30 տարի:

**** Սեբեոս, էջ 18, Ասողիկ, էջ 31. Ըստ Խոր. 31 տարի: Հին Սեբեոս, էջ 13, հմմտ. Ուխտանես, էջ 69.

***** Ս. Անեցի, էջ 56, Այրիվանեցի, էջ 56. Ըստ Խոր. 19 տարի:

****** Սեբեոս, էջ 15 (հին), էջ 18 (նոր). Ասողիկ, էջ 31, Ուխտանես, էջ 69. Ըստ Խոր. 31 տարի:

* Իմ ուղղումն է. Խորենացին գահատարիք չունի:

** Իմ ուղղումն է. Ըստ Խոր. 20 տարի. Ուխտանես, էջ 74. Քսան և մինչ:

*** Իմ ուղղումն է. Ըստ Խոր. 20 տարի. հմմտ. Մ. Անեցի, Ս. Անեցի, Մ. Այրիվանեցի:

XI. ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ ՈՒ ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ժամանակաբանական սկզբնագրի վերականգնումը նոր դրություն է ստեղծում Խորենացու աղբյուրների վավերականության ասպարեզում։

2. Արիստոն Փեղղացու օրինակը։

3. Սրանց վավերականությունը նոր կշիռ է տալիս այն տեղեկություններին, որ Խորենացին տալիս է սրանց երկերից քաղելով։

4. Եթե մովսիսամերժության պարագլուխ համարենք Դուտշմիտին, իսկ մովսիսընկալության պարագլուխ՝ Կոնիբերին, ապա պետք է ասենք, որ Դուտշմիտ իրրև Խորենացու քննադատ թերվում է ցած, իսկ Կոնիբեր՝ հաղթանակում։

XII. Գ ԳԻՐՔ

1. Այսքանը և այս չափով վերաբերում էր Բ գրքին։

2. Վերջնական խոսք կարելի է ասել Գ գրքի ժամանակաբանական սկզբնագիրը վերականգնելուց հետո։

3. Այս մասը պատրաստ է ընդհանուր գծերով և վերջնական կերպարանքով, կզեկուցվի հետո։

4. Միայն կանխելով կարող ենք ասել, որ ինչպես Բ գրքում վճռական նշանակություն է ունեցել Արտավազդ Ա-ի տարիների աղավաղումը, այնպես էլ Գ գրքում ազդել է Արշակ Բ-ի տարիների աղավաղումը։

5. Խորենացու այժմյան բնագիրը Արշակին տալիս է 30 տարի, Սերեոս ու Ասողիկ 7 տարի (հմմտ. Լ ու Լ տառերի նմանությունը)։

6. Մեր կարծիքով Խորենացու սկզբնագրի մեջ Արշակին տրված է եղել Ժէ—17 տարի։

7. Այս ուղղումը բաց է անում Գ գրքի էլ ժամանակաբանական կծիկի խճճումները։

8. Սահակ-Մեսրոպի մահերը 440-ից գեսը չեն անցնում և սրանով վերանում են Խորենացու V դարի հեղինակ լինելու ժամանակաբանական առարկությունները։

ՎԵՐՋԱԲԱՆ

1. Մովսես Խորենացու V դարի հեղինակ լինելու դեմ արվող ժամանակաբանական առարկություններն ըստ իս ամենագլխավոր առարկություններն են։

2. Մնացած բանասիրական առարկությունները մեծ մասամբ առաձգական են։

3. Չպետք է մոռանալ, որ նույնիսկ Դուտշմիտ 632—642-ից գեսը չէ դնում (Kleine Schriften, III, էջ 335, 1893 թ.)։

4. Սորագույն մաքսիմալիզմ. Խորենացին IX դարի վերջերքում։

5. Այսուհետև տնտեսության պատմաբանը կարող է Խորենացու երկը համարել վաղ միջնադարյան կյանքի արձագանք։

6. Խորենացու «Պատմության» ժամանակաբանական սկզբնագրի վերականգնումը Խորենացուն VII դարից ավելի շուտ դեպի V դարն է տանում քան դեպի...IX։

7. Թրակոծված քերթողահայրը՝ բարձրագլուխ։

ԽՈՐԵՆԱՑԻՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Խորենացիի պատմագիրքը քննող մեկը գարմանքով հարց կուտա ինքզինքն, թե ինչու պատմահայրը Հայաստանի հեթանոսական դարերու պատմության համար իր աղբյուրները հիշատակելուն, բոլորովին կանտես քանի մը առաջնակարգ պատմական գործեր—և անոնք ալ հունարեն գրված—որոնց մեջ շատ ավելի բնգարձակ տեղեկություններ կրնար գտնել Հայաստանի մասին, քան իր հիշածները։

Ինչ, չեմ հեյլենասեր, որ գրքի սկիզբն իսկ կգրե. «Եվ այս բանի վրա թող ոչ ոք չզարմանա, որ թեպետ շատ ազգեր մատենագրություններ են ունեցել, ինչպես ամենքին հայտնի է,